## Արձանագրություն N 2

ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/10 ծածկագրով վարչական սարքավորումների (բազմաֆունկցիոնալ սարք՝ լազերային, տեսամոնիտորներ) ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 07.11.2022թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Տ. Ղուկասյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Լ. Խալաթովա |
| | Կ. Բարսեղյան |
| | Ա. Խաչատրյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Ավանեսյան |

Բացակայում էին գնահատող հանձնաժողովի անդամներ ՝ Գ. Հակոբյան, Գ. Խաչատրյան

### 1. Գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակցի մասին

(Տ. Ղուկասյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

բ) Հայտերի ներկայացման վերջնաժամկետը eauction.armeps.am էլեկտրոնային համակարգում սահմանվել է մինչև 04.11.2022թ. ժամը 11:00-ն: Ընթացակարգի աճուրդը կայացել է eauction.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով 07.11.2022թ. ժամը 11:00-11:30-ը:

գ) Գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի համար | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին |
| 1 | 1 | <<ՊԱՏՐՈՆ ՌՄ>> ՍՊԸ | 400000 | 332500 | 20 % | 399000 | 240000 | 20 % | 288000 |
| 1 | 2 | <<ՅՈՒՆԻՔՈՄՓ>> ՓԲԸ | 400000 | 292000 | 20 % | 350400 | 250000 | 20 % | 300000 |
| 1 | 3 | Հրանտ Համբարձումյան Ա/Ձ | 400000 | 333333 | 20 % | 399999.6 | 333333 | 20 % | 399999.60 |
| 1 | 4 | <<ՍԵԳ>> ՍՊԸ | 400000 | 397700 | 0 % | 397700 | 397700 | 0 % | 397700 |

դ) Գնման ընթացակարգին 2-րդ չափաբաժնի մասով հայտ չի ներկայացվել:

## 2. Հայտի գնահատման և գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

---

(Տ. Ղուկասյան)

2.1. Գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները մասնակցի հայտը գնահատվել է բավարար:

2.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. N534-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային աճուրդի իրականացման>> կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/10 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել <<ՊԱՏՐՈՆ ՌՄ>> ՍՊԸ-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ 0:*

## 3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

---

(Տ. Ղուկասյան

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.2 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել <<ՊԱՏՐՈՆ ՌՄ>> ՍՊԸ -ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ 0:*

3.2 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.1 կետի <<դ>> ենթակետը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը՝ ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/10 ծածկագրով գնման ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած,

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ 0:*

## 4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

---

(Տ. Ղուկասյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ _______________________ Տ. Ղուկասյան

Անդամներ՝ _______________________ Լ. Խալաթովա

_______________________ Կ. Բարսեղյան

_______________________ Ա. Խաչատրյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ _______________________ Ա. Ավանեսյան